6557

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«06» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 163 - 25

Նախաձեռնող՝ ***«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ***
ք. Երևան, Բուզանդի փող. 1/3

Գործունեությունը՝ ***Փոքր Մանթաշ բնակավայրում դպրոցի կառուցում***
Շիրակի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 163 - 25

«06» հունիսի 2025թ.

Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փոքր Մանթաշ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Փոքր Մանթաշ բնակավայր

Ներածական մաս. «ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Փոքր Մանթաշ բնակավայրում կառուցել դպրոց:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի մարզի Շիրակի դաշտավայր կոչվող սարահարթի սահմաններում: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1952.0-1956.0 մետրերի սահմաններում: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են խորը հորիզոններում և հորատված հորատանցքերի արդյունքում չեն բացահայտվել:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում, կառուցվող շինության վրա, բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ: Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

Համաձայն էսքիզային նախագծի դպրոցը բաղկացած կլինի 4 մասնաշենքերից՝ նախատեսված 288 դպրոցականների համար:

Տարածքում առկա է գործող դպրոցի մասնաշենքերը, որոնք ենթակա չեն քանդման: Հարևանությամբ գտնվում են բնակելի տներ, հողամասեր և այլ տարածքներ:

Նախատեսվում է կառուցել դպրոց, բացօթյա մարզադաշտ, վազքուղի, իսկ ընդհանուր տարածքը՝ բարեկարգել և կանաչապատել: Երկու մասնաշենքերի տակ նախատեսվում է նկուղային հարկ, որի ընդհանուր մակերեսը կլինի՝ 1539.9 քմ: Դպրոցի առաջին մասնաշենքը /տարրական դպրոց/ կունենա ուղղանկյան ձև՝ 27.6x20.0 մ առանցքային չափերով, կլինի եռահարկ՝ առանց նկուղային հարկի: Առաջին մասնաշենքում կլինեն տարրական դասարաններ, ներառական դասարան, մարզասրահ-խաղասենյակ, շախմատի դասարան և այլն:

Երկրորդ մասնաշենքի /կենտրոնական/ առաջին հարկում նախատեսվում է մուտքային հարթակ՝ թեքուղիներով, նախասրահ, հանդիսությունների դահլիճ, ճաշասրահ, կենտրոնական աստիճան, տնօրենի աշխատասենյակ, մեկ վերելակ, իսկ երկրորդ հարկում՝ ուսմասվարների /միջին և տարրական դպրոցների/ աշխատասենյակներ և կաբինետներ: Երրորդ հարկում կլինեն գրադարանը, կաբինետներ և լինգաֆոնային կաբինետ: Կիսանկուղային հարկում տեղադրված կլինի ճաշարանի խոհանոցը՝ օժանդակ սենքերով:

Երրորդ մասնաշենքը լինելու է միջին և ավագ դպրոց՝ դասասենյակներով, կաբինետներով և սանհանգույցներով, որը կունենա 29.4x20.0 մ չափեր: Մասնաշենքը կլինի եռահարկ, մի փոքր հատվածում՝ երկհարկանի, որտեղ նախատեսվում է քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության կաբինետները: Նկուղային հարկում նախատեսվում է հրաձգարան, սանհանգույցներ և օժանդակ տարածքներ:

Դպրոցային համալիրի չորրորդ մասնաշենքը /մարզադահլիճ/ կունենա ուղղանկյան ձև՝ 26.0x15.7 մ առանցքային չափերով: Այն կլինի մեկհարկանի՝ մարզական գույքի սենյակով: Այս մասնաշենքում չի նախատեսվում նկուղային հարկ:

Դասավանդումը կիրականացվի ընդհանուր ուսումնական կաբինետներում: Կաբինետները կահավորված կլինեն ցուցադրական և աշակերտական լաբորատոր սեղաններով: Քիմիայի լաբորատորիայում տեղադրված կլինի օդաքաշ պահարան: Լաբորատոր սեղանները համալրված կլինեն վարդակներով, քիմիայի լաբորատոր սեղանները՝ լրացուցիչ ջրի ծորակներով: Դասարանները նախատեսված են լինելու 24 աշակերտի համար:

Սակավաշարժուն խմբի երեխաների համար նախատեսված է տեղադրել վերելակ: Աստիճանավանդակների դռները կլինեն հակահրդեհային և ինքնափակվող: Դպրոցի բոլոր սենյակները կահավորված կլինեն համապատասխան սարքավորումներով և կահույքով: Բոլոր հարկերն իրար հետ կապված կլինեն և կունենան հարկերը կապող միջհարկային վերելակ՝ հաշմանդամների համար:

Նախագծով նախատեսվում է մինչև 120.0 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում տանիքում, բաղկացած 4 ենթասեղաններից, 216 հատ արևային մոդուլներից՝ յուրաքանչյուրը 555 Վտ:

Գազամատակարարումն իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Նախատեսվում է կառուցել նոր կաթսայատուն, որտեղ կլինեն երկու ջրատաքացուցիչ կաթսաներ, թաղանթային ընդարձակիչ անոթ, պոմպեր և այլն:

Դպրոցի ջերմամատակարարումը նախատեսված է ալյումինե ռադիատորներով՝ բացառությամբ սպորտսրահի, որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ մոտակա էլեկտրական ենթակայանից, տեղադրելով առանձին հաշվիչ:

Շինարարության փուլում նախատեսվում է ժամանակավոր ջրագծի անցկացում՝ գործող դպրոցի ջրագծից: Շինարարության փուլում աշխատողների համար տեղադրվելու է բիոզուգարան՝ լվացարանով: Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միացվելու է բնակավայրի ջրատարին:

Կենցաղային կոյուղու ցանցը կլինի համակցված: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս կհեռանա բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցին կմիանա կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ: Կառուցվելու է մաքրման կայան:

Դպրոցն ապահովված կլինի օդափոխության ներածման և արտածման համակարգերով, ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով և այլն:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 2.33696 հա,
- հողամասի օգտագործվող մակերես՝ 1.59736 հա,
- առկա պահպանվող դպրոցի սահմանազատվող տարածք՝ 7396.0 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 3432.1 քմ /21.5 %/, որից
- կառույցի զբաղեցրած մակերեսը՝ 2747.7 քմ, սալվածք՝ 684.4 քմ,
- կանաչապատման մակերես՝ 7392.5 քմ /46.2 %/,
- բարեկարգում՝ 5149.0 քմ /32.3 %/:

Նախատեսվող գործունեության կառուցապատման ժամանակ կատարվելու են 11829 խմ ծավալով հողային աշխատանքներ, որից հետլիցքը՝ 3773.8 խմ, իսկ մնացած հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են համաձայն Արթիկի համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի: Տնկվելու են՝ հացենի արևելյան՝ 39 հատ, գիհի կազակական՝ 40 հատ, սոճի կովկասյան՝ 50 հատ, առկա եղևնիների վերատնկում և այլն: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է տարածքում գոյություն ունեցող ոռոգման համակարգից:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, փորման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինհրապարակի ցանկապատում՝ համապատասխան բարձրության ցանցով, շինարարական տեխնիկայի վիճակի

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևաջրերի և շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ, շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկում՝ համապատասխան մասնագիտացված կետերում և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահել շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրաթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի մի մասն օգտագործել տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը,
- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար, պետք է փռել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է բետոնասալը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվող գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրաթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- բացառվելու է աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից և այլն:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի իրականացում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- թափոնների տեղափոխման կազմակերպման վերահսկում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացման վերահսկում,
- շինտեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկում,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացման վերահսկում, կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կպչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովելու նպատակով:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փոքր Մանթաշ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Շիրակի մարզպետարանից, Արթիկի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փոքր Մանթաշ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Սվետլանա Կիզիրյան